ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՔՆԱՐԻԿ ՀՈՍՅԱՆԻ 2019 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. «2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ 08 բաժնի 02 խմբի 05 դասի «12. Կինեմատոգրաֆիայի», «13. Մշակութային ժառանգության», «14. Գրի և գրչության», «18. Արվեստների» ծրագրերով կազմակերպությունների հետ կնքված ընդհանուր 1 233 469 430 դրամի, որից՝ 4637 հոդվածով՝ 786 650 300 դրամի, 4639 հոդվածով՝ 447 819 130 դրամի դրամաշնորհի հատկացման պայմանագրերի հիման վրա իրականացվել են գանձապետական գործառնություններ և հաշվապահական ձևակերպումներ «Client Treasury» էլեկտրոնային համակարգի միջոցով: Կազմվել են 366 ժամանակացույցեր, 366 քաղվածք-պայմանագրեր, 502 հավաստագրեր, պարտավորություններ:
2. Excel էլեկտրոնային ծրագրում մուտքագրվում է 24 հատ «Կինեմատոգրաֆիայի», 20 հատ «Մշակութային ժառանգության», 12 հատ «Գրի և գրչության», 310 հատ «Արվեստների» ծրագրերին վերաբերող բոլոր պայմանագրերը՝ մասնավորապես նշելով կազմակերպության և միջոցառման անվանումները, հրամանի և պայմանագրի համարները, ամսաթվերը, աշխատանքի կատարման, հաշվետվության ներկայացման և պայմանագրի գործունեության ժամկետները, ներկայացված հաշվետվություններում առկա շեղումները, ուշացած օրերի և դրան համապատասխան տույժի գումարները, հսկողություն իրականացնող բովանդակային վարչության անունը, պայմանագրի ընդհանուր գումարը, ֆինանսավորումը, փաստը և մնացորդը:
3. «e-invoicing» հարկային ծրագրով էլեկտրոնային եղանակով նախարարություն ներկայացված 87 էլեկտրոնային հաշիվների հաստատում:
4. Ստուգման արդյունքում ընդունված հաշվետվությունների վերաբերյալ 251 եզրակացությունների կազմում, պայամանագրով նախատեսված աշխատանքների

կատարման և հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում տույժերի գանձում:

5. Այլ ընթացիկ աշխատանքներ՝ գրությունների պատրաստում, ֆինանսական հաշվետվությունների հետ կապված բազմաթիվ հարցերի պարզաբանում և լուծում (նաև բանավոր):

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՔՆԱՐԻԿ ՀՈՍՅԱՆ

12 դեկտեմբերի 2019 թ.